

Որակի հոշակագիր Ապրանքների առևտուրն ըստ ապրանքային խմբերի

0 Ընդհանուր տեղեկատվություն վիճակագրական արտադրանքի մասին		
0.1	Անվանումը	Ապրանքների առևտուրն ըստ ապրանքային խմբերի
0.2	Ոլորտը	Արտաքին առևտուր
0.3	Պատասխանատու մարմինը, բաժինը, անձը և այլն	Արմստատ Վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժին Բաժնի պետ Քրիստինե Պողոսյան Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Հանրապետության պող., Կառավարական տուն 3 Հեռախոս՝ +374 11 583 995 Էլ. փոստ kristina@armstat.am , info@armstat.am
0.4	Նպատակը և պատմությունը	Տեղեկատվությունը անհրաժեշտ է ըստ ապրանքային խմբերի ապրանքների առևտրի վերաբերյալ ամփոփ տվյալներ ստանալու և այն ՀՀ վճարային հաշվեկշռի կազմման աշխատանքներում օգտագործելու համար, ինչպես նաև օգտագործողներին տրամադրելու անհրաժեշտ տեղեկատվություն ապրանքների արտահանման և ներմուծման ծավալների վերաբերյալ ըստ առանձին ապրանքային խմբերի:
0.5	Օգտագործողները և կիրառումը	Վիճակագրական տեղեկատվության հիմնական օգտագործողներն են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, հասարակական, գիտակրթական, ֆինանսական կազմակերպությունները, գործարար համայնքը, զանգվածային լրատվամիջոցները, միջազգային կազմակերպությունները և այլն: Ապրանքների առևտրի ցուցանիշներն ըստ ապրանքային խմբերի կիրառվում են տնտեսության բնագավառում ռազմավարությունների մշակման, մարտավարական խնդիրների լուծման, տնտեսության ճյուղերում օտարերկրյա ներդրումների վերլուծության, բիզնես միջավայրի վերլուծության, սոցիալական զարգացման միտումների բացահայտման և այլ նպատակներով:
0.6	Տեղեկությունների աղբյուրները	Տվյալների աղբյուր է հանդիսանում մաքսային վիճակագրությունը:
0.7	Տվյալների հավաքման իրավական լիազորությունը	Տվյալները հավաքվում են «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի և «Հնգամյա վիճակագրական ծրագրի» հիման վրա, ինչպես նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2016թ. հունիսի

		20-ի «Վիճակագրական տվյալների հավաքման կարգը հաստատելու մասին» թիվ 05-Ն և «Տարեկան վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին» որոշումների հիման վրա:
0.8	Ռեսպոնդենտների (սկզբնական տեղեկություններ ներկայացնողների) ծանրաբեռնվածությունը	Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածություն չի հաշվարկվում:
1 Բովանդակություն		
1.1	Բովանդակության նկարագիրը	Ապրանքների առևտուրն ըստ ապրանքային խմբերի ընդգրկում է այն տվյալները, որոնք վերաբերվում են արտահանման և ներմուծման ծավալներին (բնաիրային և արժեքային արտահայտությամբ) ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացուցակի (ՄՏԳԱԱ) բաժինների և խմբերի:
1.2	Վիճակագրական հասկացություններ	<p>Արտահանումը – այլ երկրների տնտեսական տարածքներ ազատ շրջանառության համար երկրի սահմանով դուրս բերված ապրանքները, որոնք նվազեցնում են երկրի նյութական ռեսուրսների պաշարները: Ապրանքը համարվում է արտահանված այն պահին, երբ այն արտահանվում է երկրի տնտեսական տարածքից:</p> <p>Արտահանման ծավալները հաշվարկվում են ՖՕԲ գներով:</p> <p>Ապրանքի ՖՕԲ արժեքը իր մեջ ներառում է ապրանքի արժեքը և այն ծառայությունները, որոնք իրականացվում են ապրանքը մինչև արտահանող երկրի նավահանգիստ հասցնելը, որից հետո բոլոր ծախսերը և ռիսկերը ընկնում են գնորդի վրա:</p> <p>Ներմուծումը –երկրի տնտեսական տարածք ազատ շրջանառության համար ներս բերված ապրանքները, որոնք ավելացնում են երկրի նյութական ռեսուրսների պաշարները: Ապրանքը համարվում է ներմուծված այն պահին, երբ այն ներմուծվում է երկրի տնտեսական տարածք:</p> <p>Ներմուծման ծավալները հաշվարկվում են ՄԻՖ գներով:</p> <p>Ապրանքի ՄԻՖ արժեքը իր մեջ ներառում է ապրանքի ՖՕԲ արժեքը և այն ծառայությունների արժեքը, որոնք իրականացվում են երկրի սահմանից մինչև ներմուծող երկրի նավահանգիստ հասցնելը, այսինքն բոլոր ծախսերը և ռիսկերը մինչև ներմուծող երկրի</p>

	<p>նավահանգիստ ընկնում են վաճառողի վրա:</p> <p>Ներմուծման ժամանակ կարևորվում են գործընկեր երկրների բնորոշման հատկանիշները, դրանք են՝</p> <ol style="list-style-type: none"> 1. գործընկեր երկրի բնորոշումն ըստ ապրանքի ծագման երկրի 2. գործընկեր երկրի բնորոշումն ըստ ապրանքի առաքման 3. գործընկեր երկրի բնորոշումն ըստ գնման՝ պայմանագիր կնքող երկրի: <p>Գործընկեր երկրի բնորոշումն ըստ ապրանքի ծագման հատկանիշի որոշելու համար հաշվի է առնվում հետևյալ հիմնական սկզբունքը՝ ամբողջությամբ արտադրված, ստացված տվյալ երկրում:</p> <p>Գործընկեր երկրի բնորոշումն ըստ ապրանքի առաքման՝ առևտուր անող երկրի հատկանիշի որոշելու համար հաշվի է առնվում հետևյալ հիմնական սկզբունքը՝ թե ապրանքը որ երկրից է առաքվում՝ անմիջական առևտուր անող երկիր:</p> <p>Գործընկեր երկրի բնորոշումն ըստ գնման՝ պայմանագիր կնքող երկրի հատկանիշի որոշելու համար հաշվի է առնվում հետևյալ հիմնական սկզբունքը՝ թե գնորդը որ երկրի ռեզիդենտի հետ է գործարք կատարել:</p> <p>Արտահանման և ներմուծման ծավալներում չեն ընդգրկվում դրամական ոսկին, շրջանառության մեջ գտնվող արժեթղթերը, թղթադրամները և մետաղադրամները, տարանցիկ ապրանքները, գործառնական վարձակալությամբ արտահանվող և ներմուծվող ապրանքները, տարացքային անկլավներ առաքված կամ ստացված ապրանքները:</p> <p>Երկրի տնտեսական տարածքը ներառում է աշխարհագրական տարածքը, որը գտնվում է երկրի կառավարության կառավարման ներքո և որտեղ ազատ տեղաշարժվում են ապրանքները, անձիք և կապիտալը:</p> <p>ՀՀ ռեզիդենտ է համարվում ֆիզիկական անձը, տնային տնտեսությունը, ցանկացած իրավաբանական անձը (ձեռնարկությունը) կամ ՀՀ տարածքում գործող որևէ այլ տնտեսավարող սուբյեկտը, որի մշտական գտնվելու վայրը (ֆիզիկական անձանց համար բնակության վայրը) կամ տնտեսական շահերի կենտրոնը հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունը:</p>
--	---

		<p>Աշխարհագրական ընդգրկունություն</p> <p>Հայաստանի Հանրապետության աշխարհագրական տարածքը համընկնում է նրա տնտեսական տարածքին: Միջազգային առևտրի վիճակագրության վարման նպատակով Հայաստանի Հանրապետության տնտեսական տարածքը համապատասխանեցվում է նրա մաքսային տարածքին:</p> <p>Հրապարակման խմբավորումներ</p> <p>Տվյալները հրապարակվում են հետևյալ խմբավորումներով՝</p> <ul style="list-style-type: none"> • արտահանման և ներմուծման ծավալներն ըստ ապրանքախմբերի • մարդասիրական օգնության ծավալներն ըստ ապրանքախմբերի • արտաքին առևտուրն ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի բաժինների • արտաքին առևտուրն ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացուցակի 4-նիշ դասակարգման:
2 Ժամանակայնություն		
2.1	Հաշվետու ժամանակահատվածը	Ամսական
2.2	Հրապարակման ամսաթիվը	Ամսական յուրաժամանակ (օպերատիվ) տվյալները հրապարակվում են հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող 20-րդ օրը, ամսական առաջին հրապարակումը՝ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող 30/31-րդ օրը, իսկ տարեկան ցուցանիշները՝ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող տարվա 2-րդ և 3-րդ եռամսյակներում:
2.3	Ճշտապահություն	Տվյալները հրապարակվում են տարեկան ծրագրերով հրապարակման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներից ուշացումներ չեն արձանագրվել:
2.4	Հաճախականությունը	Ամսական
3 Ճշգրտություն		
3.1	Ընդհանուր ճշգրտություն	Ընդհանուր ճշգրտությանն առնչվող կոնկրետ քանակական չափումներ չեն իրականացվում:
3.2	Անճշտության աղբյուրները	Տվյալների հավաքումն իրականացվում է ՀՀ մաքսային

		ծառայությունից ստացված իրավաբանական անձանց բեռնամաքսային հայտարարագրերի, ֆիզիկական անձանց կողմից կազմակերպած առևտրի, ինչպես նաև «Ապրանքների փոխադրման հաշվառման վիճակագրական ձև»-ի տեղեկատվության հիման վրա, ամսական կտրվածքով:
3.3	Ճշգրտության չափումները/ չափելիությունը	Ընթացիկ տարվա հաշվետու ժամանակահատվածում բեռնամաքսային հայտարարագրերի, ֆիզիկական անձանց կողմից կազմակերպած առևտրի, ինչպես նաև «Ապրանքների փոխադրման հաշվառման վիճակագրական ձև»-ի տվյալների ճշգրտությունը (ընթացիկ գներով) իրականացվում է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համար ներկայացված համապատասխան տվյալների հետ համադրման միջոցով:
4 Համադրելիություն		
4.1	Ժամանակագրական համադրելիություն	Մինչև 2003թ.-ը ցուցանիշը ներկայացվել է ԱՊՀ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 2-րդ խմբագրության համապատասխան: 2003-2007թթ. կիրառվել է ԱՊՀ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 3-րդ խմբագրությունը, 2007-2012թթ.՝ ԱՊՀ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 4-րդ խմբագրությունը, 2013-2014թթ.՝ ԱՊՀ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 5-րդ խմբագրությունը: Սկսած 2015թ.-ից կիրառվում է ԵՏՄ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկը:
4.2	Համադրելիությունն այլ վիճակագրության հետ	Բացակայում է
4.3	Նախնական և վերջնական վիճակագրության միջև փոխկապվածությունը	Առաջին անգամ հրապարակված տվյալներն որակվում են նախնական: Հրապարակված տվյալների փոփոխություններն ուղեկցվում են բացատրական ծանոթագրություններով՝ փոփոխությունների կիրառման ժամանակ: Նախնական տվյալները վերանայվում են ՀՀ մաքսային ծառայության կողմից ներկայացված ճշգրտումների և այլ ստուգաճշտումների հիման վրա: Վերջնական տվյալները ներկայացվում են տարեկան հրապարակումներում:
5 Մատչելիություն		

5.1	Տարածման ձևաչափ	<p>Հրապարակումներ</p> <p>Ամսական հրապարակումներ</p> <p>«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույց (հայերեն և ռուսերեն):</p> <p>Տարեկան էլեկտրոնային հրապարակումներ</p> <p>«Հայաստանի վիճակագրական տարեգիրք» (հայերեն, ռուսերեն և անգլերեն):</p> <p>Այլ</p> <p>«Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը (ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացուցակի 2-նիշ դասակարգման) տարեգիրք (հայերեն և անգլերեն):</p> <p>«Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը (ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացուցակի 4-նիշ դասակարգման) տարեգիրք (հայերեն և անգլերեն):</p> <p>«Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը (ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացուցակի 8-նիշ դասակարգման) տարեգիրք (հայերեն և անգլերեն):</p> <p>Տվյալների բազա</p> <p>http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6</p> <p>Ինտերնետային հասցե</p> <p>Հրապարակումների էլեկտրոնային տարբերակները հասանելի են հայերեն (ամբողջական), ռուսերեն և անգլերեն հետևյալ հասցեով.</p> <p>http://www.armstat.am/am/?nid=82</p>
5.2	Հիմնական նյութերը. Պահպանումն ու կիրառելիությունը	<p>Տեղեկատվությունը պահպանվում է ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային շտեմարանները ներառում են Իրավաբանական անձանց համար. ա/ բեռնամաքային հայտարարագրի համարը, բ/ապրանքների արտահանման կամ ներմուծման ամսաթիվը, գ/շրջանների ծածկագրերը ըստ կազմակերպության գրանցման վայրի, դ/գործարքի տեսակի ծածկագիրը և հիմնական</p>

		<p>մաքսային ռեժիմների ծածկագրերը, ե/ ընդլայնված մաքսային ռեժիմների ծածկագրերը, զ/կազմակերպության հարկ վճարողի հաշվառման համարը, ի)արտահանող և ստացող կազմակերպության անվանումը և իրավաբանական հասցեն, յ) ապրանքի ծածկագիրը ըստ ԱՏԳԱԱ անվանացանկի, խ) նշանակման երկրի ծածկագիրը, ծ) առևտուր անող երկրի ծածկագիրը, կ) նշանակման երկրի ծածկագիրը, հ) ծագման երկրի ծածկագիրը, ձ) փոխադրամիջոցի տեսակի ծածկագիրը, ղ) փոխադրամիջոցի պատկանելիության երկրի ծածկագիրը, ճ) տարադրամի ծածկագիրը և փոխանակման կուրսը, մ) ապրանքի վիճակագրական արժեքը (տարադրամով (ԱՄՆ դոլար) և ազգային արժույթով), յ) ապրանքի բրուտտո և նետտո քաշը, ն) լրացուցիչ չափման միավորի ծածկագիրը և դրանով հաշվարկված ապրանքի քանակը, շ) ֆիզիկական անձանց կողմից լրացվող մաքսային հայտարարագրի համարը:</p>
5.3	Փաստաթղթավորումը	<p>Արմատատի պաշտոնական կայքի «Վիճակագրություն» հատվածի «Մեթատվյալներ» ենթահատվածում առկա է նաև լրացուցիչ փաստաթղթավորում Արժույթի միջազգային հիմնադրամի Տվյալների Տարածման Հատուկ Մտանդարտին համապատասխան, հայերեն, ռուսերեն և անգլերեն, հետևյալ հասցեով՝ https://www.armstat.am/am/?nid=549:</p>
5.4	Այլ տեղեկատվություն	<p>Մեթոդաբանական պարզաբանումներ առկա են «Հայաստանի վիճակագրական տարեգրքում»:</p>
6 Լրացուցիչ փաստաթղթավորում		
6. 1		<p>Առկա է տեղեկատվություն Ընդհանուր վիճակագրական բիզնես-գործընթացի մոդելի համաձայն հետևյալ հասցեով՝ https://www.armstat.am/am/?nid=373:</p>